

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դ-ուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *Լ*.

- 1) ոսկ-որված, բ-եռախույզ, կար-որել, թ-անցուկ
- 2) պարզ-ատրել, գոտ-որող, հոգ-իճակ, բ-եկնախեժ
- 3) դափն-արդ, թ-ածել, ուղ-որվել, ար-ագալ
- 4) ս-եռուն, ալ-որ, ազ-ագ, հետ-ակ

2

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.

- 1) հարավ(աֆրիկյան), մեկ(մեկու), թավալ(գլոր), հինգ(հարկանի)
- 2) փոքր(ի)շատե, էլ(ցանց), փոխ(ե)փոխ, դույզն(ինչ)
- 3) գառ(ի)վեր, նոր(խարբերոցի), փոխ(ծովակալ), ձեռք(բերել)
- 4) գլուխ(կոտրուկ), մեջ(բերում), օրն(ի)բուն, տուն(թանգարան)

3

Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների *չ* բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՆԵՐՍԵՍ ԵՐՐՈՐԳ ՏԱՅԵՑԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ
- 2) ՆՅՈՒ ՋԵՐՍԻ, ԴԱՎԻԹ ԱՆՀՈՂ, ՎԱՆ ՌԵՅՆ, ՎԵՐԻՆ ԴՎԻՆ
- 3) ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՋԵԼԱՆԴԻԱ, ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ՆՈՐ ՋՈՒՂԱ
- 4) ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԳԵՂԻ

4

Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա.

- 1) երկնային, հոգաբարձու, տարեվերջ, սաստկաձայն
- 2) մտավոր, դեղնաթույր, կծկվել, ննջարան
- 3) գրաբար, սնափառ, արևմտյան, խճուղի
- 4) գետնամած, մրցավար, թախծալի, կոշկակար

5

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ.

- 1) քամահրել, վատաբանել, դժգոհել, նախատել
- 2) չարախոսել, բամբասել, գրպարտել, կեղեքել
- 3) պաղատել, թախանձել, խնդրել, աղաչել
- 4) պատատուկ, պատնեշ, պարիսպ, պատ

6

Ո՞ր նախադասության մեջ է *թռչել* բառը գործածված փոխաբերական իմաստով:

- 1) Օդանավը թռչում էր ամպերի վրայով:
- 2) Վիրավոր հավքը թռավ ծառերի ճյուղերի արանքով:
- 3) Արագիլն ամեն առավոտ թռչում էր դեպի մոտակա ճահիճը:
- 4) Օրերս թռչում են իրար հետևից...

7

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:

- 1) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
- 2) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:
- 3) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը գերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 4) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:

8

Տրված բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *-իք* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

ալեքսիություն, ավետաբեր, կեղծարար, հոգեգալուստ, ազգասիրաբար, թաղապետարան, անհիշաչար, տարակարծություն, թրատել, հավաստագիր:

- 1) յոթի
- 2) ութի
- 3) հինգի
- 4) վեցի

9

Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:

- 1) ուղղաձիգ, երեկո, խաղաթուղթ, անդաստան
- 2) լեռնանցք, ժամացույց, ոմանք, տարի
- 3) խնդրագիրք, վեհապանձ, սովորույթ, բարություն
- 4) շոյանք, մոմլաթ, հարված, կանթեղ

10

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) հպարտ, լրջորեն, զվարթ, թափանցիկ
- 2) երկարատև, դուրեկան, հոգեպարար, աղմկոտ
- 3) հոտավետ, համեստ, լայն, հերոսաբար
- 4) զվարթ, առատաձեռն, ժպտուն, ներքուստ

11

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:

- 1) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
- 2) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:
- 3) Խարխուլ սանդուղքով վայր իջավ, մի քանի րոպե անիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
- 4) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ր գնացին այն օրերը, երբ սնդուկում գրնգում էր ոսկին:

12

Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:

- 1) հագա, բարձրացրիք, թռչեցինք, կորանք
- 2) կպա, արբեցին, վազեցրի, հազեցա
- 3) խորացանք, թռա, եկանք, մոտեցրեցի
- 4) կորչեցի, գտա, հասցրի, դիպանք

13

Ո՞ր նախադասության մեջ է հավասար բառը կապ:

- 1) Հավասար քայլով չափում էր ճամփան այն քարավանը ոլոր ու մոլոր:
- 2) Մարզիկների ուժերը հավասար էին. ծանր մարտ էր սպասվում:
- 3) Դարակներում բոլոր գրքերը շարված էին հավասար:
- 4) Արամին հավասար մրցակից ներկայումս չկա:

14

Ո՞ր նախադասությունը բարդ չէ:

- 1) Հոգեկան մեծ խռովքի մեջ ընկած՝ Վարդանը դարձյալ ու դարձյալ անդրադառնում էր սիրտը բզկտող մտքին՝ գազանին խոցելուն՝ ներքուստ զգալով մեծ պատասխանատվություն:
- 2) Մահացու հրավառությունը, խուրձ-խուրձ բարձրանալով, տարրալուծվում էր, ցրվում՝ տեղը զիջելով ավելի խոշոր խրճերի:
- 3) Մտնելով իր ննջասենյակը՝ մթության մեջ գտավ ինչ-որ տուփ և բացելով կողպեքը՝ հանեց նամակների մի խուրձ:
- 4) Համոզվելով, որ գիշերը ճակատամարտը չի սկսվի՝ Վարդանը հրամայեց հերթով քնել, իսկ արթուն զորագնդերին՝ պատրաստ լինել ամեն անակնկալի:

15

Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ինչքան անիվը վատ է, այնքան էլ աղմուկը շատանում է:
- 2) Նա վայր դրեց երեխային և հյուրերի հետ դուրս եկավ՝ վանքի բաժինները տեսնելու:
- 3) Ո՞վ պիտի հոգ տանի սովալլուկ որբերի մասին:
- 4) Շատ մի խորացիր անորոշության լաբիրինթոսում:


16

Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:

- 1) Սենյակի անկյունում մի ավել կար, որ անգործածելի լինելու պատճառով դարձել էր սարդի բույն:
- 2) Այդ մասին խոսելիս հորաքույրս ախ էր քաշում, և պատրաստ էր արցունքը, որ թափվում էր սև, ծալքոտած այտերի վրա:
- 3) Նրա գրասենյակի ողջ կահկարասին մի խարխուլ սեղան էր, մի աթոռ՝ հազար ու մի թելերով կապկպած, մի քանաքաման և դիմումների համար թղթեր:
- 4) Ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից՝ փոխելով անուններն ու թվականները:

17 Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբ կինը հանկարծ տխրում էր և խոնարհում աչքերը, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:



18 Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:

- 1) Փաստն այն է, որ գունավոր հեռուստատեսության գյուտարարը հայ է:
- 2) Մարդ երբեք չգիտի գնահատել այն, ինչին հասել է արդեն:
- 3) Նա ամեն ինչ կատարեց այնպես, ինչպես խոստացել էր:
- 4) Հաճախ չենք պահպանում այն, ինչ ունենք:

19 Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

Այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:

- 1) Ճամփորդությունից Գևորգի վերադառնալուց հետո որոշեցին նրան ամուսնացնել:
- 2) Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալուն պես որոշեցին նրան ամուսնացնել:
- 3) Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալու օրը որոշեցին նրան ամուսնացնել:
- 4) Այն օրը՝ Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալու ժամանակ, որոշեցին նրան ամուսնացնել:

20 Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:

- Գլխին դնում էր խունացած մի գլխարկ, որ գտել էր բազմափեղկ պահարաններից մեկում՝ արկղի մեջ և ցուցամուլաբար թեքում մի կողմի վրա:
- Եվս մի ակնթարթ ու մատներդ որսում են փականի գերտաքացած դեկանիվը:
- Նա վերջապես հասկացավ՝ այլևս չի տեսնելու իր ծննդավայրը և դառնորեն լաց եղավ:
- Վարագին տեսնելով՝ արջը անակնկալից ահաբեկված՝ ճողոպրեց դեպի ելարանը, սակայն խուճապն այնքան մեծ էր, որ շփոթվեց, սայթաքեց ու թրմփալով վայր ընկավ:
- -Գնա՛, տես ինչպես է այդ կախարդ ծերուկը փոքրիկ վանքի մեջ այդքան մարդ տեղավորում,- սարսափած հրամայեց առաջնորդը պալատականներից մեկին:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) ոչ մեկում
- 4) բոլորում

21

Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:

*Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր՝
Ձոր արևին լո՛ւյսն անգամ չի բուժեր.
Խորունկ ու ցավոտ մորմոքում մը որ՝
Ա՛հ, պիտի լայննա՛, երբ իջնե գիշեր:*

- 1) արևելահայերենով
- 2) միջին հայերենով
- 3) գրաբարով
- 4) արևմտահայերենով

22

Պնդումներից քանիստ՞ում սխալ կա «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Մեծ Մհեր» ճյուղի վերաբերյալ:

- Մհերը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր դյուցազնական ուժը և չափահաս դառնալով՝ տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
- Մհերը գոտեմարտում է Սասունի հացի ճանապարհը կտրող հսկա առյուծի հետ և նրա երախը պատռելով՝ մեջտեղից կիսում:
- Մհերը սպանում է Սպիտակ Դևին և ազատելով գեղեցկուհի Դեղձուն-Ծամին՝ ամուսնանում նրա հետ:
- Մհերը մեծամարտում սպանում է Մըսրա Մելիքին և տիրում Բաղդադին:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) մեկում
- 4) երկուսում

23

Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- 1) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում:
- 2) Դիլանը և Սոնան մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ:
- 3) Սոնան ամուսնությունից մեկ տարի հետո մահանում է:
- 4) Դիլան դային Սոնայի մահից հետո ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:

24

Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքին:

- 1) Մուրադն ու Արամը գողացված ձին պահում են մի լքված այգու գոմում:
- 2) Գողացված ձին Մուրադն ու Արամը վերադարձնում են՝ թողնելով ձիատիրոջ այգու գոմում:
- 3) Չարմիկ Մուրադին ճանաչողների մեծամասնությունը խելառ էր համարում նրան:
- 4) Խոսրով քեռին բնավորությամբ շատ հանգիստ ու հանդարտ մարդ էր:

25 **Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:**

*Անմահական ջրրով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա.
Նըստիմ, վըրես շրվաթ անիս՝ զարբար վըրան իս ինձ ամա.
Սուչս ինացի՛, է՛նենց սպանե՛ սուլթան ու խսան իս ինձ ամա:*

- 1) «Աշխարումս ախ չիմ քաշի»
- 2) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Թամամ աշխար պըտուտ էկա»

26 **Ո՞ր բառն է բաց թողած:**

*Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես*

- 1) հմայքով
- 2) դյութանքով
- 3) նազանքով
- 4) թովչանքով

27 **Հատվածներից որը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

- | | |
|--|---------------|
| ա. Ո՛հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջագգեստ մը շրշեց իմ շուրջ: | 1. «Տրտունջք» |
| բ. Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե՛ գիս,
Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե՛ հյուլեիս... | 2. «Իմ ցավը» |
| գ. Շատերը գիս մերժեցին.
«Քընար մ'ունի սուկ», - ըսին: | 3. «Սիրել» |
| դ. Հեք մարդկության մեկ ոստը գոս
Հայրենիք մը ունիմ թըշվառ... | 4. «Լճակ» |

- 1) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 3) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 4) ա-3, բ-2, գ-4, դ-1

28 **Ինչո՞վ է ավարտվում Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը:**

- 1) Արմենակը լուր է ուղարկում, որ մայրը չգա, որովհետև ինքը կնոջ հետ Մոսկվա է մեկնում:
- 2) Առանց ձիու աշխատատեղ գնացած Սիմոնը այնքան ուշ է վերադառնում, որ արդեն գնացքին հասնել չէին կարող, և Աղունի մեկնումը անորոշ ժամանակով հետաձգվում է:
- 3) Աղունը և Սիմոնը կրկին վիճում են, և քաղաք՝ Արմենակի մոտ, մոր փոխարեն գնում է փոքր եղբայրը՝ Սերոն:
- 4) Սիմոնը Աղունին ձիով ուղեկցում է մինչև բեռնատար մեքենան, որը նրան կայարան էր հասցնելու:

29 **Ո՞րը Մովսես Խորենացու ասույթներից չէ:**

- 1) «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»:
- 2) «Քաջերի սահմանը իրենց զենքն է, որքան կտրի, այնքան էլ կտիրի»:
- 3) «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:
- 4) «Քաջերի սերունդները քաջեր են»:

30 **Ո՞ր շարքում նշված բոլոր հեղինակներն են սփյուռքահայ:**

- 1) Վազգեն Շուշանյան, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան
- 2) Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց, Հակոբ Պարոնյան
- 3) Կոստան Չարյան, Միսաք Մեծարենց, Հակոբ Օշական
- 4) Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Մուշեղ Իշխան

31 **Ինչո՞ւ էր Գրիգոր Չոփրապի «Չարություն» նորավեպի համանուն հերոսը գողությամբ զբաղվում:**

- 1) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար
- 2) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով
- 3) սիրած աղջկա՝ Վասիլիկի քնահաճույքներին գոհացում տալու համար
- 4) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար

32 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*...Եվ հավատացի՛նք, հարբած ու զինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի -
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի...*

- 1) «Հեռացումի խոսքեր»
- 2) «Անվերնագիր»
- 3) «Մահվան տեսիլ»
- 4) «Վահագն»

33 **Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:**

- Իմ դուռն է ծեծում քամին խոլական,
Իմ պատերի տակ հեծում է անվերջ,
Մեղմիվ երգում է մեղեդին լալկան,
Ոռնում ամայի փողոցների մեջ:
- Խաղաղ ժպիտը փռեց վրաս,
Մեղմիվ խոսեց և անուշ լռեց,
Ու թախծոտ կյանքս դարձավ երագ:
- Անդարձ աշխարհի վարդագույն միգում,
Կյանքի հեռավոր, անցած օրերում,
Մի խորհրդավոր թախիժ էր հսկում:

34

Տրված շարքերից քանիսի՞ր բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը.

- խա-ամ, դ-խուհի, օ-արակ, պատ-գամբ
- գեղ-ուկ, լա-վարդ, անգի-ում, ստեր-
- թա-ցնել, փա-ցնել, տարեր-, լայնափող-
- զար-ուղի, փեր-, որ-ատունկ, զար-ոնք
- վար-ակ, խոտհուն-, փղ-կալ, խուր-

35

Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել:

*Սոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սուհն,
Սուհն՝ իմ սեզ հարսի պես՝
Լուսնի ոսկե կուժն ուսին...*

- փոխաբերություն
- շրջադասություն
- համեմատություն
- բաղաձայնույթ

36

Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.

առոք-փառոք, այսօր-վաղը, նոփ-նոր, լեփ-լեցուն, տուն-թանգարան, դիոլ-գուռնա, լավ-վատ:

37

Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ:

Անընդհատ հոխորտում էր, ամպագոռգոռ խոսքերով փորձում էր բոլորին ապշեցնել՝ նույնիսկ մի ակնթարթ չմտածելով, որ երկու անպաշտպան կանայք կարող են հակառակ գնալ իր կամքին և դուրս գալ իր իշխանության տակից՝ նպաստելով նրա ինքնառչնչացմանը:

38

Տրված գոյականներից քանիսի՞ր հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.

մեղալակիր, ժամացույց, տոհմածառ, տեսակետ, ուսապարկ, խնամակալ, ուսադիր, սևամորթ, խորագիր, սուգանավ:

39

Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.

1. զինավարժանք, 2. ստորև, 3. ձեղնահարկ, 4. կպչուն, 5. հայեցակարգ, 6. պատրանք, 7. մանկավարժական, 8. դանակ, 9. մատուցարան:

40

Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *անհարիր* բառին.

1. հարմարավետ, 2. պատշաճ, 3. վստահ, 4. հարգարժան, 5. համապատասխան, 6. հարիր:

41

Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Ձեռքը տարավ գրպանը (1) հանեց մի փոքրիկ ոսկի դրամ (2) դա վերջին դրամն էր որ մնացել էր մոտը: Ափի մեջ բռնած (3) քայլեց դեպի շուկան հաց գնելու: Բարձր հնչում էր մոլլայի աղոթքը (4) և այն փովում էր քաղաքի վրա: Բանաստեղծը զգեց ափի ոսկին ներքև (5) իր ոտների տակ (6) տրորեց մաշված մուճակով (7) և կանգնելով նրա վրա հրապարակով մեկ գոչեց

Ով մարդիկ (8) ինչ որ դուք խնդրում եք Աստծուց (9) ահա այստեղ է իմ ոտքերի տակ...

42

Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:

Հինգ նյարդային օր տևեց սպասումը, և առավոտյան ես ու Ռատուլը ազարակների վաճառքի գործակալության տիրուհու մոտ գնացինք, որն իր կարծիքը հրանցրեց գյուղի տների մասին:

1. **տիրուհու մոտ** – տեղի պարագա, **որն** - ենթակա
2. **իք** – հատկացուցիչ, **կարծիքը** – ուղիղ խնդիր
3. **հինգ** - չափի պարագա, **տևեց** – պարզ ստորոգյալ
4. **սպասումը** - ենթակա, **առավոտյան** – ժամանակի պարագա
5. **Ռատուլը** - ենթակա, **ազարակների** – հատկացուցիչ

43

Ո՞ր շարքերի բոլոր դերանուններն են միևնույն տեսակի.

1. այսպես, այդպիսի, որպիսի, նույնպիսի
2. որտեղ, ինչպես, երբ, մի քանի
3. նույն, այդ, այդպիսի, միևնույն
4. ես, դու, ինքը, ով
5. բոլորը, յուրաքանչյուր ոք, ամենքը, ողջ
6. ինչ-որ, երբևէ, այլ, մեկը

Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Վահան Տերյանի որ ստեղծագործությունից է:

- Նայվածներով խորին, եկար, ներո՞ղ,
Եկար կրկին գերող, խորհրդավո՞ր.
Եկար հուշիկ, անչար ավաղներով,
Օրորներով ամենօրոր:
- Բարելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս,—
Անհետ կորել, անցել է — չար մշուշի պես:
- Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:
- Նվագով անուշ քանի՞ սիրեն
Կանչում էին ինձ և կախարդում,
Բայց սիրտըս մաքուր, որպես ցորեն,
Պահեց անունըդ վշտում արթուն:

1. «Որպես Լաերտի որդին...», 2. «Կարծես թե դարձել եմ ես տուն», 3. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին», 4. «Ոսկեհանդերձ եկար...»

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Օրենադիր, ձերբազատ* բառերում ածանց չկա:
2. *Նախ* բաղադրիչը որոշ բառերում ածանց է, որոշ բառերում՝ արմատ:
3. Բարդածանցավոր բառերը կազմված են երկու կամ ավելի արմատներից և միայն մեկ ածանցից:
4. *Գերասան, սուտասան, ապերասան* բառերը բարդածանցավոր են:
5. Բաղադրյալ բառի արմատները կարող են միանալ հոդակապով, իսկ նախածանցները միանում են առանց հոդակապի:
6. Մեկ արմատին չի կարող միանալ երկուսից ավելի ածանց:

Բ մակարդակ

46

Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա.

- 1) տա-ական, վազքու-ի, ի-երորդ, բե-ի
- 2) ու-ություն, տանջա-ուկ, հո-երգություն, ե-որդ
- 3) ըն-իմադիր, ու-ակի, եր-ենցադ, հո-եկ
- 4) մ-կահողմ, անդո-ավետ, չո-որդ, խորագ-ին

47

Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.

- 1) կռփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ
- 2) գռեհիկ, անմխիթար, անշրջահայաց, անմատչելի
- 3) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ձեռնբաց
- 4) չնչին, հակադրվել, կրթություն, կրկնակոխ

48

Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա.

- 1) ընչաքաղց, իջևան, ապօրինի, մատենագիր
- 2) ակնդետ, ցուցահանդես, միջակետ, շնչասպառ
- 3) գինեգործ, բուժարան, սառցահատ, թիկնապահ
- 4) կիսատ, հմտություն, ընդդեմ, վարչապետ

49

Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:

- 1) Ո՞ր գնացին, ինչպե՞ս անցան
Քար քրքրող, երկինք խմող
Տարինե՛րս, տարինե՛րս...
- 2) Ամեն, ամեն ինչ առան քո ձեռքից,
Օրդ սև արին, սև արին տարիդ,
Բայց քո տան հիմքի քարին տարեկից
Տարիքդ իլել չկարողացան:
- 3) Ճիշտ են ասում՝ քո տարիքի մարդիկ արդեն
Ձեռ են քաշել պարսպ-սարսպ թափառելուց...
- 4) Ո՛չ կնոջդ դառը խոսքին,
Ո՛չ լացին ես գլուխ դնում,
Ո՛չ էլ նրա թախանձանքին:

50

Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **խայտաճամուկ** - վառ և բազմազան գույներով, **դարակազմիկ** - նոր դարաշրջան բացող
- 2) **երկպառակություն** - համերաշխության խախտում, **ճարճատյուն** - բորբոքվելով վառվելու կրկնվող ձայն
- 3) **դերվիշ** - մահմեդականների թափառական կրոնավոր, **անմեկին** - անբացատրելի, անլուծելի բան
- 4) **ծերպ** - մի բանի մեջ բացված ճեղք, **զազիր** - սարսափ առաջացնող

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդաձանցավոր.**

- 1) հինգհարկանի, միաբանություն, շանթարգել, ուխտադրժորեն
- 2) երկփթանոց, հիվանդանոց, հետախուզական, ծովանկարիչ
- 3) տանտիրուհի, մարգագետին, կեսգիշերային, գորաբանակ
- 4) հետաքննություն, բազմախորհուրդ, բարեհնչյուն, դյուցազնական

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են նախաձանցավոր.**

- 1) նախնի, նախագահ, նախահաշիվ, նախանձ
- 2) վերադարձ, վերակարգ, վերընթաց, վերնատուն
- 3) առերես, առևտուր, առհավետ, առաջ
- 4) տարանջատ, տարբեր, տարակույս, տարարմատ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

- 1) ընդմիջում, օձաձուկ, ծունկ, ձմեռ
- 2) նախադուռ, գառ, գումարում, տոհմանուն
- 3) աշուն, շարժում, լեռ, խիզախություն
- 4) լուծում, ձիաբեռ, եգ, հաստատություն

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

- 1) Մնայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
- 2) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
- 3) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 4) Մեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:

55 **Ո՞ր նախադասության մեջ սուկաձանցավոր բայ *չկա*:**

- 1) Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տրորի թաց հողը:
- 2) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել իրեն էր սպասում:
- 3) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թոռան հետ գցել էր այդ գյուղը:
- 4) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քշտած, բահն ուսին՝ անցել առվով, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:

56 **Ո՞ր տարբերակում մակբայ *չկա*:**

- 1) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
- 2) Երազ աշխարհում Ամեն բան հավետ
Գալիս է, գնում Ու ցնդում անհետ:
- 3) Մենք դիտմամբ փորձում էինք ջղայնացնել նրանց, սակայն չէր հաջողվում:
- 4) Մեր վարպետներն են հնուց տուֆ սիրել և այն վերածել նախազարդ քարի:

57

Ո՞ր տարբերակում է ընդգծվածը նախադասություն:

- 1) Այգիների մեջ կորած լայնարձակ դաշտը կարծես դրախտ լիներ:
- 2) Նա որոշեց բարձրանալ տուն՝ մի փոքր հանգստանալու:
- 3) Ինքը բժիշկ էր՝ մի փոքրիկ թագավորության տեր, մենք՝ այդ թագավորության բնակիչները:
- 4) Իսկ աղջիկները, գույնզգույն ծաղիկներ հավաքելով, ծաղկեպսակներ էին սարքում:

58

Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:

Շիրվանզադեի բնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները ճանաչելն էր:

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) պատճառի պարագա
- 4) որոշիչ

59

Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Մտաբերում եմ այն երջանիկ վայրկյանը, երբ առաջին անգամ ներկայացա թագավորին: *(որոշիչ)*
- 2) Այդ իշխաններից շատերը հակառակ էին, որ Աշոտ Երկաթը ամուսնանար քեզ հետ, թագուհի՛ս: *(հանգման անուղղակի խնդիր)*
- 3) Նա սկսեց յուր հաղթական արշավանքները, նախքան թշնամին կհարձակվեր: *(ժամանակի պարագա)*
- 4) Իշխանն այլևս չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ գարդը: *(վերաբերության անուղղակի խնդիր)*

60

Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:

- 1) *Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ՝ քեզ չխաբելուն:*
Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ, որ քեզ չի խաբում:
- 2) *Այդ սրտառուչ երգը ահեղ մարտում ընկածների մասին է:*
Այդ սրտառուչ երգը այն մասին է, թե ինչպես նրանք ընկան ահեղ մարտում:
- 3) *Աղջիկը քնից արթնանալուն պես շտապում էր դպրոց:*
Հենց որ աղջիկը քնից արթնանում էր, շտապում էր դպրոց:
- 4) *Ես անհամբեր սպասում էի ընկերուհուս՝ քաղաք վերադառնալուն:*
Ես անհամբեր սպասում էի, որ ընկերուհիս քաղաք վերադառնար:

61

Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Վարդանը մեկիկ-մեկիկ հիշում էր այդ ամենը կանանց հյուրասիրությունը գեղջուկների պարզ գրույցը գիշերային աստղալի երկինքը:
- 2) Ախ որքան մեծ բավականություն է հրեղեն ալիքների մեջ լողալ զգալ նրանց զարհուրելի ջերմությունը այրվել բայց երբեք մոխիր չդառնալ:
- 3) Վարդանի հիշողությունը չխաբեց նրան գյուղը պետք է այնտեղ լիներ որտեղից նշմարվում էին լույսի նշույլներ:
- 4) Մանկահասակ կինը իսկույն բերեց մի փոքրիկ արկղիկ նա այն պահում էր դեռ անցյալ տարվանից որը բացեց հյուրերի առջև:

62

Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Մուրացանը «Գ-ևորգ Մարգպետունի» պատմավեպը գրելիս օգտվել է Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու աշխատություններից:
- 2) Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի հիմքում ընկած են հայ հնագույն առասպելների սյուժեները:
- 3) Ավետիք Իսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը գրված է «Մասնա ծռեր» էպոսի հազարամյակի առիթով:
- 4) Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը գրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

63

Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:

- ա. Փափագ սրբտով խընդիրք արել
- բ. Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել
- գ. Կույս սափորով, լուռ ու մունջ
- դ. Բարի ժըպտան իր սերին
- ե. Օխտն աղբյուրից ջուր է առել
- զ. Կապել սիրո ծաղկեփունջ
- է. Խընդիրք արել աստղերին
- ը. Օխտը ծաղկից ծաղիկ քաղել

- 1) ը, գ, բ, դ, ա, ե, է, գ
- 2) ե, գ, ը, գ, բ, է, ա, դ
- 3) ե, գ, ա, դ, ը, բ, է, գ
- 4) բ, է, ե, դ, ը, ա, գ, գ

64

Տրված հատվածներում նակրայով արտահայտված քանի՞ պարագա կա:

- Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարտըր անքուն,
Ու թևերն ահա փռած տիրաբար՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
- Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:
- Սրընթաց պախրա՞, թե՞ գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այժա՞մը հանկարծ մոտակա ժայռից
Անդունողը մի քար գլորեց ոտքով:

65

Պնդումներից քանի՞սն են ճիշտ Բաֆֆու «Մամվել» վեպի վերաբերյալ:

- Տաճատուհին ծրագրել էր ազատվել Մուշեղ Մամիկոնյանից՝ ճաշի ժամանակ նրան թունավորելով:
- Տաճատուհին ատում էր Ռշտունիներին և որդու հարսնացուի անունը լսելիս հունից դուրս էր գալիս:
- Արտագերս ամրոցում պատանդ պահվող Որմիզդուխտը հուսահատությունից ինքնասպան է լինում՝ չցանկանալով դառնալ Մերուժանի կինը:
- Մերուժան Արծրունին շուրջ տասնչորս ամիս պաշարում է Արտագերսը, բայց միայն Դոկակի մատնությամբ է կարողանում ամրոց մտնել:

66

Բառերից քանիսի՞ վերջին արմատն է բազմավանկ.

ծանոթագրություն, մեծապատիվ, գաղտնաձածուկ, նվիրատվություն, ռազմաճակատ, մեղրածոր, ծանրակշիռ, գեղագանգուր, խորագինի, մեծաշնորհ, բարեխնամ, մելամաղձոտ:

67

Նշել այն մտքերի համարները, որոնք չեն բխում տեքստի բովանդակությունից:

Վերջին ուսումնասիրությունների համաձայն՝ Ծիր Կաթինի կենտրոնում գտնվում է հսկա սև խոռոչ, որն ապահովում է գալակտիկական ձգողականությունը: Այն 2,6 միլիոն անգամ մեծ է Արևից:

Ոչ վաղուց հայտնաբերված «Սագիտարիուս-Ա» սև խոռոչի մոտ որոշ աստղեր շարժվում են վայրկյանում վեց հարյուր մղոն արագությամբ (ժամում 2,2 միլիոն մղոն): Հիշյալ սև անցքը Արևից և նրա շուրջը պտտվող մոլորակներից գտնվում է 26.000 լուսային տարի հեռավորության վրա, այնքան խորն է և այնպիսի ձգողականություն ունի, որ ոչինչ չի կարող խուսափել նրանից, անգամ լույսը: Նման սև մարմինների հայտնաբերումը հնարավոր է միայն նրանց մոտ գտնվող աստղերի շարժման, գազի և փոշու միջոցով: Սև անցքին մոտ գտնվող հարյուրավոր աստղեր, որոնք խիտ շրջաններով պտտվում են վերջինիս շուրջը, կլանվում են խոռոչի կողմից՝ ավելի ու ավելի մեծացնելով այն: Հայտնաբերվել է ևս մեկ տարօրինակ սև անցք՝ «Օլդ Ֆեյթֆուլը», որը մեզնից 40.000 լուսային տարի հեռու է, առավել հզոր է նախորդից, ժայթքում է՝ արտանետելով Էվերեստի մեծության նյութեր, շարժվում է վայրկյանում ավելի քան 171 մղոն արագությամբ:

1. «Օլդ Ֆեյթֆուլ» սև խոռոչի հզորությունը գերազանցում է «Սագիտարիուս-Ա»-ին:
2. Ժամանակակից գիտության հնարավորությունները սահմանափակ են, և 40.000 լուսային տարի հեռավորության վրա գտնվող սև խոռոչների մասին ոչինչ չգիտենք:
3. «Սագիտարիուս-Ա» սև խոռոչը շրջապատող ծեր աստղերի հսկայական արագությունը մեծացնում է սև խոռոչի՝ շրջակա մարմինները կլանելու ուժը:
4. Ծիր Կաթինի գալակտիկական ձգողականությունն ապահովում է վայրկյանում 600 մղոն արագությամբ շարժվող սև խոռոչը, որն իրեն շրջապատող մոլորակներից 26.000 լուսային տարի հեռավորության վրա է:

68

Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հետ ընդհանուր արմատ ունեն.

1. դնչկալ, 2. ործկալ, 3. անակնկալ, 4. հյուրընկալ, 5. կալանավոր:

69

Նշել այն հատվածների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:

1. Չեզանից հետո եկավ գիտություն՝
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա...
2. Ու մարդասպանը դուրս եկավ ձորից՝
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր:
3. Լինեի չոբան սարերում հեռու,
Գայի՛ր, անցնեի՛ր վրանիս մոտով:
4. Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:
5. Չյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
6. Գնամ հետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Միսայ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Ոչ որ* դերանունը հոլովվում է՝ ստանալով *ու* հոլովիչ:
2. *Ինչ-որ* անորոշ դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս իբրև որոշիչ:
3. *Այս, այդ, այն* ցուցական դերանունները նախադասության մեջ կարող են մատնանշել և՛ առարկայի հատկանիշ, և՛ առարկա:
4. *Ես ինքս, դու ինքդ, նա ինքը* կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են:
5. *Այսքան, այդքան, այնքան* ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում:
6. *Ո՞ր, քանի՞* հարցական դերանուններից *-երորդ* ածանցով կազմվում են թվականներ: